

Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառում

16.02.2017



Փետրվարի 14-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքում տեղի ունեցավ Հայոց բանակի կազմավորման 25-ամյակին նվիրված միջոցառում, որը կազմակերպել էր <<Հայոց արժիվներ>> հասարակական կազմակերպությունը՝ ՀՀ ՊՆ 4-րդ բանակային կորպուսի աջակցությամբ: Միջոցառումն իրականացվեց ՀՀ ԱԺ պատգամավոր, <<Ջերմուկ-Գրուպ>> ընկերության հիմնադիր-սեփականատեր Աշոտ Արսենյանի հովանավորությամբ:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանը, ՀՀ երիտասարդության և սպորտի փոխնախարար, <<Հայոց արժիվներ>> հասարակական կազմակերպության նախագահ Խաչիկ Ասրյանը, մարզի համայնքների ղեկավարներ, զինծառայողներ և բազմաթիվ քաղաքացիներ:

Միջոցառումն անցավ ջերմ մթնոլորտում և հայրենասիրական ոգով լեցուն պահեր պարզևեց ներկաներին:

Միջոցառման ավարտին նվերներ հանձնվեցին մի խումբ զինծառայողների: